ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2014 թվականի N 301-Ա

Լ. ՄԱԴՈՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. ***Լարիսա Մադոյանին*** 2014 թվականի հուլիսի 15-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2009 թվականի հուլիսի 15-ին կնքված N 1 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ ***2014 թվականի հուլիսի 3-ի N 01/21.2/2245-14 գրավոր ծանուցումը***:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (տնօրենի թափուր պաշտոնում) պաշտոնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Լարիսա Մադոյանին:***

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 15
ք. Հրազդան